



54. ԾՈՒԿԻԿ

Կելնի մե խա կմիկ, ունի յոթ խա լաճ: Օրին մեկ, մեր կասի. - Կնացեք լիտ ախրեք վառենք:

Կելնեն կերթան մեշեն փետ կկտոտեն, մե մեկ ուր շլանկ կպոնի, կելնեն կտաննան, ուրենց կացին կմոռնան էնտեղ:

Էն մեկել օր կասեն. - Էլնենք էրթանք մեր կացին կնդնենք ախրենք մե մեջ շլանկ էլ փետ առնենք գյանք:

Կելնեն, կերթան որ' կացին չկա:

Շատ էնտեղ պանցր սարիմ կող պից կելնի:

Էտա պիցին տեմ կանեն' կերթան, տիսնան, որ դև ճիչ դեռշամեմ թալե վեր կրակին. կվանի: Մեջ ոտ վեր դեռշամի մեկ ծերին ի տրե, մեկ ոտ վեր մեջ ծերին կտայրնա:

Խող կթանփի տակ, դև կիրիշկի կտիսնա, որ էրտսի պյուկի մարթեր շարվիր են:

Բոռա. կասի. - Պանրեկամ, տակ իճեք, խորոտ օրինավոր տայրցեք. կիրեք, խմեք. մոր կնանցեք:

Մարթեր կուրախնան. տայ կիճնեն: Կերթան կտիսնան տայր տեղ, անուշ. կասե' մատենք էսա տեղ, ուտենք, խմենք, կիշերն էլ քյնենք. մոր առատուն էլնենք խե մեր ճամբխին էրթանք:

Դևն ի կուզյն մատի. - Պարիվ էկաք, խնզանր պարիվ. - կասի. - խաց պե. կմիկ, իսոնց ուտեն:

Խաց կպիրի. կուտեն, յոթ տարվա գյինին կպիրի կխմցուցի իսոնց: Վեց ախպեր, քյանի որ կուտա' կխմեն: Ծուկիկ մոր քյամկի պարկ կկասի վեր փորին, տկի պերան մորի տկեն տյուս կխանի, առած գյինին մեջ կլցի:

Դևն էլ կիտի. թե կխմի: Բիչմ կնստեն, խանանր կուտան. կելնեն կքյնեն:

Դև կասի. - Թող քիչմ քյնեն. ինեն խորանթը քյուն, մկա ես իսոնց կվայելեմ:

Կես կիշրի գյանխ, կուզյն կայնի վեր գյխներաց. բոռա. կասի. - Վր'վ քյուն. վր'վ արթուն:

Ծուկիյ կասի. - Հմեն քյուն մեմայ Ծուկիյն ի արթուն:

Կասի. - Ծուկիյ. ինչի' չես քյնե:

Կասի. - Իմ մոր իփած թան ինզյե միտս. իմ քյուն չտանե:

Կերթան կնզյան կասի. - Աջանն. կտորմ թան իփի:

Կնին թան կիփի, կպիրի կուտա ժուկիյ կուտի: Կուտի կպատկի, քիչմ կմնա, դև էլմ կուզյն կխարցուցի, կասի. - Վո՞վ քյուն, վո՞վ արթուն:

Կասի. - Հմեն քյուն, մենայ ժուկիյն ի արթուն:

Կասի. - Ծո ժուկիկ, ինչի՞ չես քյնե:

Կասի. - Խուրուղու իմ, իշթախ կա, ինոր խամար քյունս չտանե: Կէլնի կէրթն աջալա խուրուղու կիսկի կպիրի, կուտա ժուկիյն կուտի, կուտի, կպատկի:

Քիչմ կմնա, դև էլմ կուզյն, կկանչի, կասի. - Վո՞վ քյուն, վո՞վ արթուն:

Ծուկիյ կասի. - Հմեն քյուն մենայ ժուկիյն ի արթուն:

Կասի. - Ծուկիյ, մկա՞ ինչ կուզես:

Կասի. - Էնա մաղով ճյուր կուզեմ, պիրես խմեմ:

Դևն ի, կէլնի մաղ կատնի, կէրթա ճյուր կլցի մեչ մաղի, ճյու՞ր կտատրի:

Սթաթմ էրկու էտապես այլամիշ կէլնի դև վեր ախարիմ, ժուկիյ կէլնի ծեռ կթննի ախարեքնեքաց քիթ մոռոթ կուրի: Խազար շեռոով կակխցուցի ախարեքնեքաց, կէլնեմ մե մեկ մեչ շլակ, ինչ կանդար պիտու պսն կա կշլկեմ կէրթնն:

Դևն ի, կուզյն տուն, կտիսնա, որ ո՛չ ժուկիյ կա, ո՛չ ախարեքնեք: Տուն չլտեր եմ, առեր եմ, կննցեր եմ:

Կէրթն, կնզյնն կխարցուցի, կասի. - Էսա մարթեր ի՞նչխ էլնն:

Կասի. - Ես խնթնն չեմ:

Դևն ի, կասի. - Է՞՛ր, ժուկիկ, թե որ ես դև էլնեմ քյո ճոչ կտոր ականչ կթողնեմ: Ծուկիկի ախարեքնեք կտիսնան, որ իմեն պննի մեչ իննոդակ ի, կէլնեմ կէրթնն թակավորու մոտ, կուզեմ բնննի պիրեն, կասեմ. - Ֆլան տեղ դևըմ կա, որ տյու տիսնաս, շիվար կկայնես:

Կասի. - Դև վո՞վ կանա էրթա պիրե: Ծոտ մկա էտտեղ կուզեմ էմ դև:

Կասեմ. - Մարթ չկանա, մենայ ժուկիյ կանա էրթա պիրե:

Ծուկիկի կկանչի թակավոր, կասի. - Որ էմ դև պիրես, ինչ կուզեմ կուտամ:

Ծուկիյ կասի. - Իսոնք զի կուրիսել կուզեմ:

Կանչի ուր տեր աստված, կինի ճնմբնն, կխասնի մո դևու մեչեմ, սղոց մեչկից տյուս կքննչի, բաշլայի դևու ծառեր սղոցել:

- Յա՛, յա՛, - կասի, - Էսա վո՞վ ի իմ ծառեր կկտրոտի:

Ծուկիյն ի, կասի. - Թող, ժուկիյն կա, կասեմ, մեռեր ի, անխ ի արե, որ դևու ծառերաց ուր թաքութ շինեմ:

Կասի. - Ծո՛ր որ ժուկիյն ի, կտրի՛, էնիկ գլեռոբագլեռո էլնի:

Ծուկիկ, որ խալավ փոխիր էր. ըսկի դև չճանչցավ: Խետ դևին մեյտեղ թաքութ շինեցին:

Կասի. - Ջա՛նմ. ես չեմ կիտե, կա՞րճ էր, էրկեմ էր, բոյն էլ չեմ կիտե շունջանվորտուն:

Դև կասի. - Համան իմ բոյին կեր:

Կասի. - Որ ըսկուն ի, մտի մեչ թաքութին, խենք քյո բոյով կէլնի՞:

Դև կմտնի մեչ թաքութին, ժուկիկ կբաշլայի տախտայ տնել վերեմ, պիպել:

Չվան կպարզի թաքութի տայ, կշլկի, կասի. - Պրծա՞ր, դե՛ շոտ արա. պաց էլնեմ տուս:

Ծուկիյ կասի. - Դո՞ր պոծար, ես գլեռ ժուկիյն եմ: Գլեռ իկիր եմ, քյե կտանեմ:

Դևու ծեռ կկտրի: Ծուկիյ թաքութ կշլկի կտանի քյաղքի մեչ, դննն կուտա

կանչել, որ բյուրում էրթան ներս, տոներ կոծեն, փենջարեղիտերաց թամաշա անեն:
Հմեն էլ ըսկուն կանեն, ինք թաբուս կզանի վեր քյարին, կկոտրի, ինք կփախի.
մտի ճնդցի մեչ:

Դև կվնգի կմտնի ճրտնի մեչ, կասի. - Ծուկի՛կ, որտե՞ղ կնացիր:

Կասի. - Էտատեղեն:

Դևն ի, կմտնի ճրտուն, կխեղտվի, մնա դան:

Թակավոր Ծուկիկին կկանչի, կասի. - Որ տյու ըտսկնա շոնդ տղա ես, իմ ախչի
պիտի տամ քյե:

Ուր ախչի կուտա ինոր, յոթ օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, ինոնք կխասնեն
ուրենց մուրազին, տուք էլ՝ ծեր:

